ԷԹՆԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

ՄԽԻԹԱՐՅԱՆ Գ. Ժ.

Հնուց ի վեր Կովկասը հայտնի է եղել որպես զանազան ցեղերի ու ժողովուրդների օրրան՝ վառ արտահայտված բազմէթնիկ պատկերով: Բացառություն չէր նաև Հյուսիսարևելյան Այսրկովկասը[1], որը դարերի ընթացքում իր վրա է կրել օտար նվաճողների քաղաքական լուծը և ենթարկվել էթնոմշակութային փոխակերպումների: XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական զարգացումները Հյուսիսարևելյան Այսրկովկասի պատմության համար ունեցան ճակատագրական նշանակություն: Նադիր շահի (1736-1747) մահից հետո Իրանի պետությունը տրոհվել էր անընդմեջ միմյանց դեմ պայքարող մի շարք ինքնուրույն խանությունների: Այդ քաղաքական գործընթացներից դուրս չէր մնում նաև Հյուսիսարևելյան Այսրկովկասը, որտեղ առաջանում են Շաքիի, Դերբենդի, Ղուբայի, Շամախիի և Բաքվի կիսանկախ խանությունները՝ էթնիկ խայտաբղետ կազմով: Իրանում իշխանության եկած Զենդերի արքայատոհմի տիրապետությունը Կուրից հյուսիս ձևական բնույթ էր կրում՝ պարարտ հող նախապատրաստելով ռուսական և թուրքական ռազմաքաղաքական և առևտրատնտեսական ներկայության հաստատման համար:

Հյուսիսարևելյան Այսրկովկասի՝ XVIII դ. երկրորդ կեսի էթնո-քաղաքական պատմության ուսումնասիրությունը սերտորեն կապված է տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրերի հետ: Խորհրդային պատմագիտության մեջ այս հարցը խիստ քաղաքականացվել է՝ արմատավորելով Հյուսիսարևելյան Այսրկովկասի էթնիկ պատկերի իրականության՝ որոշակիորեն գիտակցված խեղաթյուրման քաղաքականությունը, երբ «ուղղում էին» արխիվային վավերագրերի «թաթարներ» և «պարսիկներ»[2] ընդհանրական անվանումները՝ դրանք

---

[1] *«Հյուսիսարևելյան Այսրկովկաս» եզրույթը նշված ժամանակահատվածում ներառում էր Բուն Աղվանքի (Կուրից հյուսիս) տարածքների՝ Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի և Շաքիի խանությունների պատմաաշխարհագրական սահմանները: XVI-XVIII դդ. սկիզբն այս տարածքի մեծ մասի նկատմամբ էթնոքաղաքական առումով առավել կիրառելի էր «Շիրվան» եզրույթը՝ պայմանավորված Շիրվանի բեկլարբեկության (կենտրոնը՝ Շամախի) փաստով: Շիրվանի սահմանների մասին տե՛ս* Tadhkirat al-muluk: *A Manual of Safavid Administration. (circa 1137/1725). Persian text in fagsimile (B.M. Or. 9496). Translated and explained* by Minorsky V., *London, 1943, p. 167-168.;* Петрушевский И. *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Л., 1949, с. 117.*

[2] *Իրանի պատմության իսլամական շրջանից մինչ այսօր «պարսիկ» անվանումը պարտադիր էթնիկ նշանակություն չունի (տե՛ս* Асатрян Г. *Этническая композиция Ирана: от "Арийского простора" до азербайджанского мифа, Е., 2012, с. 31-49): XVIII*

փոխարինելով «ադրբեջանցի» եզրույթով՝ իր ժամանակակից ընկալմամբ[3]: Փորձենք վերականգնել տարածաշրջանի էթնիկ պատկերը՝ մերժելով խորհրդային պատմագրության կողմից այս տարածքներում ադրբեջանցիների գոյություն ունենալու փաստը «հնացնելու» քաղաքականությունը:

XVIII դ. 70-ական թթ. առաջին կեսին տարածաշրջան այցելած ակադեմիկոս Ս. Գմելինը Դերբենդից մինչև Բաքու ընկած տարածքի մահմեդական բնակչության մասին նշում է, որ նրանք թաթարական ու պարսկական արյուններից առաջացած «խառնուրդ են»[4], որը դեռևս ձևավորված ժողովուրդ չէր: XVIII դ. 70-80-ական թթ. լույս է տեսնում «Ռուսական պետությունում բնակվող բոլոր ժողովուրդների նկարագրությունը» վերնագրով աշխատությունը՝ հիմնված ակադեմիական երկարամյա ուսումնասիրությունների և գիտական հարուստ նյութերի վրա՝ անդրադարձ կատարելով նաև կովկասյան ժողովուրդներին[5]: Հյուսիսարևելյան Այսրկովկասի թաթարներին Կազանի և Աստրախանի թաթարներից զանազանելու համար XVIII դ. երկրորդ կեսի ռուսական ակադեմիական շրջանակները տալիս են «լեռնային թաթարներ» անվանումը[6]: 1770-ական թթ. Այսրկովկաս այցելած ակադ. Ի. Գյուլդենշտեդտը այստեղ բնակվող թաթարական երեք տիպի ժողովուրդներ էր տարբերում, այն է՝ կումիկներ, թերեքեմեններ[7] և նողայներ: Նրանց լեզվական ընդհանրությունը թուրքերենի հետ այնքան մեծ էր, որ գիտնականը դա համեմատում է իտալերենի, իսպաներենի և պորտուգալերենի հետ[8]: Ի. Գյուլդենշտեդտը նշում է, որ Շիրվանում օգտագործվող թուրքական խոսվածքի թաթարերենը և թուրքերենը այնքան են իրարից տարբերվում, որքան՝ լատիներենն իտալերենից[9]: Թաթարական երեք լեզուներից թուրքերենին առավել մոտ էր թերեքեմենների լեզուն: Ի. Գյուլդենշտեդտը թերեքեմենների էթնիկ

դարում այսպես էին կոչում իրանական ծագմամբ ժողովուրդներին, իսկ վաճառականների պարագայում այն կարող էր նշանակել իրանահպատակ (Իրանի քաղաքացի), օրինակ՝ հայ:

[3] **Маркова О.** *Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, с. 77, прим. 53.*

[4] **Гмелин С.** *Путешествие по России для исследования трех царств естества, ч. 3, СПб., 1785, с. 19.*

[5] *Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. 1-4, СПб., 1776-1799.*

[6] *Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. 2. - О народах татарского племени, пер. с немецкого, СПб., 1776, с. 45.*

[7] *Թերեքեմենները կամ թարաքամանները թուրքմեններին ազգակից ցեղեր են:*

[8] **Гюльденштедт И.** *Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 101.*

[9] **Гильденштедт И. А.** *Путешествие по Кавказу в 1770-1773 гг., СПб., 2002, с. 170.*

տարածքներ է նշում Հարավային Դաղստանը, Դերբենդը, Շիրվանը՝ Ֆաթհ Ալի խանի ողջ տիրույթները մինչև Սալիան[10]: Թարաքամա (թերեքեմեններ) ցեղի մասին տեղեկություններ են ամփոփված Վրաստանում ռուսական ներկայացուցիչ Ս. Բուրնաշևի՝ տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացումներին նվիրված փոքրածավալ աշխատության մեջ[11]: Այսպես, Մուղանի դաշտում գտնվող այդ ցեղի մասին նա հաղորդում է, որ շուրջ 1500 ընտանիք Թալա Հասան խանի գլխավորությամբ ճանաչում էր Ֆաթհ Ալի խանի գերիշխանությունը[12]: Մինչև XX դ. սկիզբը թերեքեմենները դիտարկվել են որպես առանձին էթնոս, սակայն հետագայում նրանք միացվում (կոնսոլիդացվում) են աղրբեջանցիների հետ՝ պահպանելով էթնիկ ինքնանվանումն ու ինքնընկալումը: Հարևանները՝ կումիկները, դարգինները, նրանց կոչում են թերեքեմեններ, թարաքամա, իսկ հյուսիսային կումիկները, ավարները, դարգինների մի մասը և մյուսները՝ փադար[13]:

XVIII դ. վերջին Հյուսիսարևելյան Այսրկովկասի ժողովուրդների մասին ազգագրական տեղեկություններ է հավաքել Բիբերշտայնը: Տարածքի բնակչության նկատմամբ նրա կատարած ազգագրական դիտարկումները համընկնում էին Ս. Գմելինի գնահատականների հետ[14]: Հյուսիսարևելյան Այսրկովկասի երկրների ժողովուրդների և «իսկական պարսիկների» միջև տարբերությունները 1796 թ. պարսկական արշավանքի մասնակից Մարշալ ֆոն Բիբերշտայնը բացատրում էր նրանց՝ Կովկասի այլ ազգերի, մասնավորապես Կասպից ծովի հյուսիսային շրջանների թաթարական ցեղերի հետ խառնուրդի հանգամանքով: Նա այն կարծիքին էր, որ դրանք ավելի շուտ արժանի են անվանվելու Կովկասի թաթարներ, քան պարսիկներ: Այդ տարբերությունը նա հիմնավորում էր թաթարների լեզվական ու դավանական առանձնահատկություններով: Նաև գտնում էր, որ թաթարների լեզուն տարբերվում է Տավրիդայի (Ղրիմի) թաթարների լեզվից, և փոքր-ինչ նմանություններ էր տեսնում Ռուսաստանում եղած թաթարական բարբառների հետ: Պարսկերենն օգտագործվում էր միայն պետական գրագրություններում և Շիրվանի խանական միջավայրում: Պարսիկներից թաթարներին տարբերելու մյուս կարևոր գործոնն, ըստ Մ. Բիբերշտայնի, կրոնն էր: Թեպետ խաները և նրանց շրջապատը հետևում էին շիա

---

[10] Նույն տեղում, էջ 257:

[11] **Бурнашев С.** *Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793.*

[12] Նույն տեղում, էջ 11:

[13] *Народы Дагестана. Отв. редакторы: Арутюнов С. А, Османов А. И., Сергеева Г. А., М., 2002, с. 507.*

[14] **Marschall fon Bieberstein**. *Tableau des provinces situüessur la cote occidentale de la mer Caspienne enter les fleuves Terek et Kour, St: Petersbourg, 1798, p. 88.*

դավանանքին, սակայն գրեթե ողջ Դաղստանում ու Շիրվանում հասարակ բնակչությունը հետևում էր սունի դավանանքին[15]:

Անշուշտ, իրանալեզու ժողովուրդները եղել են Հյուսիսարևել-յան Այսրկովկասի հնաբնակներից և իրենց գոյությունն էին շարունակում նաև XVIII դ. երկրորդ կեսին՝ թվային առավելությամբ: Այդ մասին գրավոր վկայություններ են պահպանվել Վ. Զուբովի պարսկական արշավանքի (1796 թ.) ընթացքում ռուս սպաների կատարած ազգագրական հետազոտություններում[16], որտեղ ծիսերի վերաբերյալ վիճակագրական տվյալներն առնչվում են բացառապես հայերին, հրեաներին և պարսիկներին: Դերբենդի շիադական էթնիկ հանրության նկատմամբ Ա. Սերեբրովի, Պ. Բուտկովի աշխատություններում հանդիպող «թաթեր» եզրույթը[17] պետք է դիտարկել պատմաքաղաքական ու էթնոմշակութային զարգացումների լույսի ներքո: Ի սկզբանե թյուրքերն այսպես էին կոչում իրանալեզու ժողովուրդներին՝ որպես թյուրքերենին վատ տիրապետողների և այլն: Ժամանակի ընթացքում իրանական զանազան էթնիկ խմբավորումների համար «թաթեր» եզրը վերածվում է էթնոնիմի, որոնք տարբեր էին իրենց ծագումով ու մշակույթով[18]:

XIXդ. առաջին ռուս-պարսկական պատերազմից (1804-1813 թթ.) անմիջապես հետո Հյուսիսարևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական նկարագրության մեջ նշվում են հայեր, հրեաներ և սունի ու շիա դավանանքի մահմեդականներ[19]: Դրանով Կովկասի ռուսական բարձրաստիճան զինվորական հրամանատարությունը հիմք էր դնում տարածաշրջանից «պարսիկ» (իրանցի) էթնոնիմի բնաջնջմանն ու Հյուսիսարևելյան Այսրկովկասի արհեստականորեն թյուրքացման

---

[15] Նույն տեղում, էջ 89:

[16] **Симонович Ф.** *Описание Южного Дагестана. 1796 г.;* **Дренякин Н.** *Описание Ширвана. 1796 г.;* **Бутков П.** *Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.;* **Серебров А.** *Историко-этнографическое описание Дагестана. 1796 г. [История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные ма-териалы. /Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, М., 1958 (далее-ИГЭД)].*

[17] **Серебров А**. , *նշվ. աշխ., էջ 177.* **Бутков П.,** *նշվ. աշխ., էջ 204: Թաթերի մասին տե՛ս* **Յակոբեան Ա.,** *Հայ-թաթերի տարաբաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ դարի սկզբից-ԺԹ դարի վերջը)(Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԻԱ., Պէյրութ, 2001, էջ 125-142),* **Հակոբյան Ա.,** *Թաթախոս հայեր (պատմաազգագրական ուսումնասիրություն), թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 2002;* **Акопян А.** *О культурном облике татоязычных армян. Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции), Е., 2003, 17-18 ноября, с. 268-269.; его же, Татоязычные армяне в Восточном Закавказье. Археология (IV) и этнология (III) Кавказа (между-народная научная конференция). Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2002, с. 193-196.*

[18] **Асатрян Г.** *նշվ. աշխ., էջ 81:*

[19] **Ртищев Ф.** *Сведения о Дагестане. 1813 г. (ИГЭД, с. 250).*

քաղաքականությանը: Տեղացի ժողովուրդների համար խիստ վտանգավոր այդ քաղաքականությունը միտված էր ամրապնդելու ռուսական տիրապետությունը Հյուսիսարևելյան Այսրկովկասում, այն պոկելու Իրանից՝ արմատախիլ անելով «պարսիկ» էթնոնիմը: Իրանական տարրին որպես այլընտրանք ընտրվում է «մուսուլմաններ» անվանումը՝ շեշտը դնելով թաթարների վրա: Ծագելով ու զարգանալով ռուսական կայսրության ներսում՝ քաղաքական այս գործընթացն իր գագաթնակետին հասավ Խորհրդային Միության օրոք, երբ նախկին «կովկասյան, ադրբեջանական թաթարներ», «թյուրք» կամ «թաթար» անվանումները[20] պաշտոնապես փոխարինվեցին «ադրբեջանցի» անվամբ:

Նշենք, որ էթնոս (ժողովուրդ) հասկացությունը նշանակում է սոցիալական առանձնահատուկ խմբավորում, որն առաջանում է մարդկանց կամքից անկախ, որպես պատմական երկարաժամկետ գործընթացի արդյունք[21]: Էթնոսների (ժողովուրդների) ձևավորումը հիմնված է ոչ թե զանազան էթնոսների «խառնուրդի», այլ դրանց համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունքի վրա՝ հիմքում ունենալով էթնիկ գերիշխող սուբստրատ: Թերևս, «ադրբեջանցի էթնոսի» առաջացման[22] համար որպես դոմինանտ հանդես է եկել տա-բածաշրջանի իրանական մահմեդական էթնիկ հանրությունը՝ կովկասյան ժողովուրդների «խառնուրդով» հանդերձ, որի վրա էլ շերտավորվել է թյուրքական սուբստրատը[23]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հյուսիսարևելյան Այսր-կովկասի էթնիկ նկարագրի մեջ ուրույն տեղ էին զբաղեցնում շահսևանները (այսինքն՝ շահին սիրողները[24])՝ Իրանի հյուսիս-արևմտյան տարբեր հատվածներում գտնվող բազմաթիվ ցեղային խմբերի ամբողջությունը[25]: Նրանց ձևավորման հիմքում (առաջին Սեֆյան շահերի օրոք) նախատեսվում էր, որ շահսևաններ կարող էին դառնալ նաև ոչ թյուրքական ժողովուրդների ներկայացուցիչներ, օրինակ՝ կովկասյան ժողովուրդներ, քրիստոնյաներ: Շահսևանները Հյուսիսարևելյան Այսրկովկաս էին վերաբնակեցվել Իրանի ներքին

---

[20] **Худадов В.** *Современный Азербайджан (Новый Восток, 1925, N 3, с. 167);* **Алекперов А.** *Азербайджанцы. Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 71-77.*

[21] **Бромлей Ю., Марков Г.** *Этнография, М., 1982, с. 5.*

[22] *Այս հարցի մասին տե՛ս* **Ստեփանյան Գ.,** *Արևելյան Այսրկովկասում "ադրբեջանցի" էթնիկական գործառման հարցի շուրջը (Մերձավոր Արևելք, պր. V, Ե., 2008, էջ 137-145):*

[23] *Հմմտ.* **Асатрян Г.** *նշվ. աշխ., էջ 75:*

[24] *"Շահսևաններ" անվանման ծագման մասին տե՛ս* ***The Encyclopaedia of Islam****. Vol. IX, Brill, 1997, p. 221.*

[25] **Tapper R.,** *Frontier nomads of Iran. A political and social history of the Shahsevan,Cambridge University Press, 1997, p. 24.: ÝáõÛÝÇ՝ Shāhsevan in Ṣafavid Persia. /Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 37, No. 2 (1974), pp. 321-354.*

նահանգներից, մասնավորապես, Մուղանի դաշտից[26]: Շահսևանների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, երբ ամռան ամիսներին նրանք բարձրանում էին լեռները, իսկ ձմռանը բնակվում Շաբրանի մահալում: Շաբրանում բնակություն հաստատելու իրավունքը նրանք ստացել էին Ղուբայի Հուսեյն Ալի և Ֆաթհ Ալի խաներիկողմից[27]: Վերջինիս թույլտվությամբ շահսևանները Մուհամմադ խանի գլխավորությամբ Արդաբիլից վերաբնակվել էին Ղուբայի խանության Մուսկուր և Շաբրան մահալների Բայանդուրլի, Ուստաջլի, Չաղլաղլի, Ղարադաղլի և մի շարք այլ գյուղերում՝ դառնալով Ֆաթհ Ալի խանի հարկատուները[28]:

Այսրկովկասի էթնիկ քարտեզի վրա իրենց տեղն ունեին իրանա-լեզու քրդերը, որոնք 2000-3000 ընտանիքի սահմաններում ապրում էին Արաքսի աջ ափին, Դերբենդի խանությունում[29] և այլն:

Ինչ վերաբերում է XVIII դ. երկրորդ կեսի Բուն Աղվանքի էթնիկ հանրությանը, ապա պետք է նշել, որ բացի մահմեդականություն ընդունած ցեղերից, քրիստոնյա բնիկ ժողովուրդների և ցեղերի հետնորդներ էին ուդիները[30]:

XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիսարևելյան Այսրկովկասի հոծ բնակչության մեծամասնությունն էին կազմում լեզգիները[31]: Վրաց թագավոր Հերակլ Բ-ի 1769 թ. գրավոր ուղերձներից մեկը (ինչպես և վաղ և զարգացած միջնադարի հայկական ու վրացական աղբյուրները) լեզգիներին կոչում է լեկեր[32]: Լեզգիների զբաղեցրած էթնոքաղաքական տարածքը դեռևս XIV-XV դդ. եվրոպական աղբյուրներն անվանում էին «Լեզգիստան» եզրույթով[33]: Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի կողմից 1770-ական թթ. առաջին

---

[26] **Бурнашев С.,** *նշվ. աշխ., էջ 11-12: Շահսևանների մասին առավել մանրամասն տե՛ս* **Огранович И.,** *Сведения о шахсевенах, (Кавказский календарь 1870, Тифлис, 1871, с. 68-84).*

[27] **Серебров А.,** *նշվ. աշխ., էջ 177;* **Броневский С.,** *նշվ. աշխ. էջ 382-383:*

[28] **Симонович Ф.,** *նշվ. աշխ. էջ 147:*

[29] **Бурнашев С** *նշվ. աշխ., էջ 17:* **Серебров А.,** *նշվ. աշխ. էջ 177:*

[30] *Ուդիների մասին տե՛ս* **Խառատյան (Առաքելյան) Հ.,** *Ուդիներ (Աղվանների առասպելը), (Իրան-նամէ, 1994, N 2), նույնի՝ Եղիշե Առաքյալի պաշտամունքն ուդիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջը, (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, N 6):*

[31] *Լեզգիների մասին տե՛ս Народы Дагестана. Отв. редакторы:* **Арутюнов С. А., Османов А. И., Сергеева Г. А.,** с. 376-398; **Лавров Л. Лезгины** (*Народы Дагестана. Сборник статей,* М., 1955, с. 102-124). *The Encyclopaedia of Islam. Edited* **by C. E. Bosworth, E. van Donzel, B. Lewis and Ch. Pellat**. *Vol. V. Leiden E. J. Brill, 1986, p. 729-730.*

[32] *Межкавказские политические и торговые связи с Восточной Грузией (конец 60-х - начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. I. Материал подобрал и подготовил к печати* **В. Гамрекели,** *Тбилиси, 1980, с. 31.*

[33] **Шильтбергер И.** *Путешествие Иоганна Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394-го по 1427 год. (В кн.: Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, сост. В. Аталиков,вып. III, Нальчик, 2010, с. 16).*

անգամ կազմվում է Ռուսաստանի և շրջակա երկրամասերի ժողովուրդների «Նկարագրությունը», որտեղ նշվում է, որ լեզգիներով բնակեցված ընդարձակ տարածքը վրացիները կոչում են Լեզգիստան[34]: Վերջինիս աշխարհագրական սահմանը, մի կողմից, ըստ Ի. Գյուլդենշտեդտի, Ալազան գետն էր, մյուս կողմից՝ Սամուր գետը[35]: Հատկանշական է, որ 1720-ական թթ. (Ի. Գերբերի հաղորդմամբ) Լեզգիստան նահանգի մեջ էին մտնում Ղուբա և Շաքի բնակավայրերը[36], ինչը վկայում է նրանցում ոչ թե թյուրքական ցեղերի, այլ կովկասյան (ավելի ստույգ՝ լեզգիական) ժողովուրդների թվական առավելության մասին: Ավելին, եթե Ղուբայում օգտագործվող հիմնական լեզուն նա համարում է «թուրք-թաթարերենը», ապա Շաքիում՝ լեզգիերենը:

XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիսարևելյան Այսրկովկասում «աղվանական» կոչված ցեղերից շարունակում էին իրենց գոյությունը պահպանել խինալուղցիները, կրիզները, բուդուղները, ջիքերը և այլն, որոնց էթնոնիմները պահպանվել էին միայն իրենց տեղանուններում (Բուդուղ, Խինալուղ, Կրիզ, Ջիք, Ալիկ և Խապուտ): XVIII դ. վերջի տեղեկություններով՝ Ղուբայի խանության Խինալուղի և Բուդուղի մահալներն ընդունված էր կոչել Դաղստան[37], հավանաբար, հիմք ընդունելով նրանցում լեզգի էթնիկ տարրի թվական գերակշռությունը:

Ըստ Ի. Գերբերի հիշատակությունների՝ Շահդաղ լեռան շրջակայքում ապրող այդ ժողովուրդները լեզգիերենի կրողներ և ուղղադավան իսլամի հետևորդներ էին[38]: «Շահդաղյան խմբի ժողովուրդների» լեզվի յուրահատկության մասին XIX դ. երկրորդ կեսին գրում է նաև դաղստանյան ժողովուրդների լեզուների գիտական դասակարգմամբ զբաղվող կոմս Պ. Ուսլարը: Նա նշում է, որ Խինալուղում, Բուդուղում և Կրիզում գործածվող լեզվի մասին հարևան լեզգիներն իրեն հավաստիացնում էին, թե ոչ մի ընդհանրություն չկա իրենց լեզվի հետ[39]:

XVIII դ. երկրորդ կեսի գրավոր աղբյուրները հիշատակություններ են թողել Հյուսիսարևելյան Այսրկովկասում հրեաների մասին[40]: Այսպես, հրեաներ էին

---

[34] *Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. II, с. 46.*

[35] **Гюльденштедт И.** *Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 115.*

[36] **Гербер И.** *Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 (ИГЭД, 107, 110).*

[37] **Симонович Ф.,** *նշվ. աշխ., էջ 144:*

[38] **Гербер И.,** *նշվ. աշխ., էջ 80-83: Խորհրդային տարիներին նրանց ընդունված էր կոչել "շահդաղյան խմբի ժողովուրդներ" անվանումով (Ադրբեջանական ԽՍՀ-ում գտնվող Շահդաղ լեռան անունից): Այս մասին տե՛ս* **Народы Кавказа,** *т. 2, М., 1962, с. 199.*

[39] **Барон Услар П. К.** Этнография *Кавказа. Языкознание. VI. Кюринский язык, Тифлис, 1896, с. 6.*

[40] *Կովկասում հրեաների պատմության դասակարգումը տե՛ս* **Давид И.** *История евреев на Кавказе, в 2-х томах, т. 1, Тель-Авив, 1991, с. 26.*

ապրում Դերբենդի խանությունում[41], *իսկ Ղուբա քաղաքի դիմաց գտնվում էր հրեական Կուլգատ գյուղը (200 ծուխ)*[42], *որտեղ չորս սինագոգ կար:*

Հյուսիսարևելյան Այսրկովկասի՝ XVIII դ. երկրորդ կեսի էթնոքաղաքական խճանկարում ուրույն տեղ էին զբաղեցնում հայերը[43]*: Ակադ. Ս. Գմելինի վկայությամբ՝ Դերբենդ քաղաքում 1770-ական թթ. շուրջ 4000 ընտանիքներ կային, որոնցից հարյուրը՝ հայկական էին*[44]*: Աղբյուրների համաձայն, 1780-ական թթ. Թոփրաքկալեից 16 վերստ հեռավորության վրա, Գուրգենչայ գետի աջ ափին, 10 վերստ հեռավորությամբ դեպի լեռները շուրջ 30 գյուղից 15-ը հայկական էին*[45]*: Հ. Արղությանի՝ 1796 թ. փետրվարի 24-ին գեներալ Ի. Սավելևին գրած նամակում հիշատակվում է Դերբենդի շրջակայքում հայկական ինը գյուղերի մասին*[46]*: XVIIIդ. վերջի քաղաքական իրադարձությունների հետևանքով նկատվում է հայկական բնակչության կտրուկ անկում: Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով 1818 թ. կազմած Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի նվիրական ցուցակում Դերբենդ քաղա-քում հիշատակվում է ընդամենը 15-20 հայկական տուն*[47]*:*

Ղուբայի խանությունում հայերը հիմնականում ապրում էին Մուսկուրի մահալում և ունեին շուրջ 180 տուն, վեց եկեղեցի (10 հոգևոր սպասավոր)[48]*: Ղուբա քաղաքի մերձակա տարածքներում մի քանի հայկական տներ կային, որոնցից մեկում իջևանել էր Ս. Գմելինը: Նիզաբադ կայանից ոչ մեծ հեռավորության վրա էր գտնվում հայկական Բարագուն (կամ Վարագուն) գյուղը*[49]*, որը մտնում էր Նիզաբադի շրջանի մեջ*[50]*: Հայեր էին ապրում նաև Ռուստյումի մահալում, որի Քիլվար գյուղի հայկական եկեղեցին, ըստ*

---

[41] **Reineggs J. and Bieberstein M.** *A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, by Charles Wilkinson, vol. 1, London, 1807, p. 158.*

[42] **Бутков П.** *Выдержки из "Проекта отчета о персидской экспедиции в виде писем". 1796 г.;* **Серебров А.,** *նշվ. աշխ., էջ 205;* **Броневский С.,** *նշվ. աշխ., էջ 384:*

[43] *XVIII դ. երկրորդ կեսին հայերի մասին տե՛ս Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. 4, пер. с немецкого, СПб., 1799, с. 45-54.: Արևելյան Այսրկովկասում հայերի տեղաբաշխվածության մասին մանրամասն տե՛ս* **Ստեփանյան Գ.,** *Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2010:*

[44] **Гмелин С.,** *նշվ. աշխ., էջ 19; Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, ч. II, СПб.,1813, с. 115.*

[45] *Архив АН СССР, ф. 99, оп. 2, N 13, л. 23.*

[46] *Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сборник документов (Под редакцией* **Нерсисяна М.,** *т. 4,Е., 1990, с. 423).*

[47] **Ստեփանյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 46:*

[48] **Бутков П.,** *նշվ. աշխ., էջ 205:*

[49] ***Гмелин С.,*** *նշվ. աշխ., էջ 48:*

[50] ***Reineggs J. and Bieberstein M.,*** *նշվ. աշխ., էջ 162:*

ավանդության, կառուցվել է 1637 թ., ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած և օծած մատուռի տեղում[51]*:*

Ս. Գմելինի հաղորդմամբ, Շամախիում կար 50 հայկական ընտանիք[52]*, որոնք խաղողի այգիների մշակությամբ ու գինեգործությամբ էին զբաղվում*[53]*: Ս. Բուրնաշևի վկայությամբ, 1780-ական թթ. Շամախիի խանությունում 2000 քրիստոնյա ծուխ կար*[54]*: Դարի վերջին Շամախի քաղաքում հիշատակվում էր 70 հայկական տուն, իսկ խանության 15 գյուղերում՝ 470*[55]*: Շաքիի խանության հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր 62 գյուղերում*[56]*: Ս. Բուրնաշևի տվյալներով, Բաքու քաղաքում ապրում էին մի քանի քրիստոնյա վաճառականների ընտանիքներ*[57]*: XVIII դ. վերջին Բաքվում պարսկական 500-620 և 40 հայկական ծուխ կար, իսկ խանության 34 գյուղերում՝ 580-850 ծուխ*[58]*: Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից 1818 թ. կազմված Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի մասին նվիրական ցուցակում Բաքվում հիշատակում է 40 հայկական տուն*[59]*: Ակադ. Ս. Գմելինը նշում է, որ Սալիան գավառում գյուղերը անկանոն կերպով սփռված էին Կուրի երկու ափերով, որտեղ ապրում էին պարսիկներ, թաթարներ և «ոչ մեծ քանակությամբ հայեր»*[60]*: Սալիանում հայկական բնակչության գոյության մասին է փաստում այն հանգամանքը, որ 1765 թ. Էջմիածնի կողմից կազմված «նվիրական վիճակների» սահմանները ճշտող փաստաթղթում ի թիվս հայկական այլ բնակավայրերի հիշատակվում է նաև Սալիանը*[61]*: Այսպիսով,*

---

[51] **Սմբատեանց Մ.,** *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 542:*

[52] ***Гмелин С.,*** *նշվ. աշխ., էջ 96:*

[53] ***Marschall fon Bieberstein,*** *նշվ. աշխ., էջ 24:*

[54] ***Бурнашев С.,*** *նշվ. աշխ., էջ 10:*

[55] **Дренякин И.,** *նշվ. աշխ., էջ 164-167: Շամախիի հայերի մասին տե՛ս* **Ստեփանյան Գ.,** *Շամախի քաղաքի հայ ազգաբնակչության շարժընթացը (XIX դ.) [Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ. 9, Ե., 2008, էջ 108-123],* **նույնի՝** *Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը) (ՎԷմ, Ե., 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 3., էջ 74-95):*

[56] **Серебров А.,** *նշվ. աշխ., էջ 180: Շաքիի հայերի մասին տե՛ս* **Ստեփանյան Գ.,** *Նուխի և Արեշ գավառների հայերի պատմական անցյալից (Իրան-Նամէ, Ե., 1997, N 4-6, էջ 28 - 34):*

[57] **Бурнашев С.,** *նշվ. աշխ., էջ 11:*

[58] **Броневский С.,** *նշվ. աշխ., էջ 401;* **Дренякин И.,** *նշվ. աշխ., էջ 168;* **Серебров А.,** *նշվ. աշխ., էջ 178:*

[59] **Ստեփանյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 46;* նույնի՝ *Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության շարժընթացը (XIX դ.) (Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2008, N 1, էջ 176-188):*

[60] **Гмелин С.,** *նշվ. աշխ., էջ 112-113:*

[61] ***Դիվան Հայոց պատմութեան,*** *գիրք Գ, մասն Բ, Թիֆլիս, 1894, էջ 802:*

XVIII դ. երկրորդ կեսից սկսած՝ Ռուսաստանը սկիզբ է դնում տարածաշրջանի համակարգված գիտական հետազոտությանը՝ որպես դեպի տարածաշրջան ռազմաքաղաքական ներթափանցման բաղկացուցիչ մաս: Այդ հանգամանքը չի նվազեցրել դրանց գիտական նշանակությունը առ այսօր Հյուսիսարևելյան Այսրկովկասի՝ XVIII դ. երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության համար:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիսարևելյան Այսրկովկասը ժողովրդագրական խիստ արտահայտված բազմէթնիկ պատկեր ուներ, այնտեղ եկվոր քոչվոր բնակչության կողքին իրենց կեցությունն էին շարունակում պահպանել Բուն Աղվանքի բնակիչները՝ ուդիները, լեզգիները, ինչպես նաև հայերը, հրեաները, իրանական ժողովուրդները և այլք: Ավելին, XVIII դ. երկրորդ կեսին ռուսական տպագիր սկզբնաղբյուրներում ու պաշտոնական գրագրություններում հանդիպող «թաթարներ» և «պարսիկներ» էթնիկական անվանումների նույնացումը ժամանակակից ընկալմամբ «ադրբեջանցիների» հետ չի համապատասխանում պատմական իրականությանը:

ЭТНИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В СЕВЕРО-ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ (ВТОРАЯ ПОЛОВИНА XVIII В.)

МХИТАРЯН Г. Ж.

Резюме

С древнейших времен территория Северо-Восточного Закавказья претерпела этнические изменения. В результате этнических передвижений с севера на юг и с юга на север во второй половине XVIII в. его площадь была заселена различными этническими группами. Кроме коренного населения на территории исторической Албании (Алуанк) жили армяне, персы, евреи и различные тюркоязычные кочевые племена.

Анализ этнических процессов Северо-Восточного Закавказья во второй половине XVIII в. показал, что этнонимы “татары“ и “персияне” не имеют ничего общего с термином “азербайджанцы” в современном его понимании. Отсюда следует, что процесс этноконсолидации азербайджанского народа во второй половине XVIII в. еще не был завершен.

THE ETHNIC SITUATION IN NORTH-EAST TRANSCAUCASIA IN (THE SECOND HALF OF XVIII CENTURY)

G. MKHITARYAN

Abstract

Since ancient times, North-Eastern Transcaucasia has undergone ethnic transformations. Hence, in the second half of the 18th century, its area was populated by groups of various ethnic units. Besides the native nations, Armenians, Persians and Turkic-language nomadic tribes inhabited the region called Aluank (Albania) in the second half of the 18th century. The paper reveals the ethno-political affiliation of the region's Turkish nomadic tribes "Tatars" in the second half of the 18th century.